

անհուն սիրոյ կրակը աւելի ու աւելի բորբոքուելով իւր սրտում, նորից փաթաթուեց Փէրիխանումին ու ամուր գրկելով կրծքին, սկսեց շարունակաբար համրուել աչքերից ու...»

Գուցէ ոմանք առարկեն, որ քննադատութիւնը պէտք է մոռացութեան տայ, արհամարհէ այդ տեսակ արտադրութիւնները: Լաւ, բայց որ հրապարակ ելլող գործերու հարիւրէն իննըսունը այս կարգի տխուր աշխատութիւններ են, որ այդ Շահգադէ և Փէրիխանումները մասնաւոր, պատահական դէպքեր չեն, այլ ուշագրաւ, յատկանշական, տրտում երևոյթներ — այս պարագային ի՞նչպէս լռել, Վերջապէս բաւական է որչափ քաջալերեցին մեր հրատարակիչները թեթեւ ու անբովանդակ գրականութիւնը:

ԶԱԻՆ

«Ազգագրական Համեղիսի» I-X դրերը *):

4. Ծնունդ եւ Մկրտութիւն.— Գ. Լալայեանի բացատրութիւնները մեծ մասամբ անաջող են: Ահա օրինակներ.— 1) Երեխի և ծննդկանի «կոխուել» նախապաշարումը նա բացատրում է այսպէս, թէ դա նշանակում է՝ «հետզհետէ նիհարել և մեռնել»: «Կոխուել» կամ «սատանակոխ լինելն» արդէն բացատրել ենք: Նախապէս երեխան պիտի «կոխուի», չարքի պատահի (պատճառ), որպէսզի հիւանդանայ, նիհարի և ապա մեռնի (հետեանքներ): 2) Երեք տարբեր հասկացողութիւններ, որ իրար հետ ոչ մի առնչութիւն չունին, բերել խառնել է իրար. օրօրոցախեղդ կամ ծծով ընկնել, օրօրոցակոխ և օրօրոցակեօղ (օրօրոց գողացող, օրօցքի գող)**): Ահա դրանց բացատրութիւնը.— Երբ մայրը գիշերն երեխին ծիծ տալիս հէնց այնպէս էլ վրայ ընկած քնում է, յաճախ պատահում է, որ երեխան խեղդում է, այս դէպքում ասում են, որ երեխան օրօցքախեղդ է եղել, ծծով է ընկել. սա որեւէ նախապաշարման հետ կապ չունի: Երբ անհասկանալի պատճառով երեխան հիւանդանում, ճլերք է ընկնում, կամ ուշաթափւում, կապուտկում է կայն, նախապաշարուած և սնտոխապաշտ մարդը ոչ մի այլ ելք չգտնելով երեխի հիւանդութիւնը բացատրելու, այդ բոլորը վերագրում է գերբնական ուժերի, աներևոյթ չար ոգիների, չարքերի, դեերի, սատանաների, և ասում, որ նրանք ոտնահարել, կոխել, դիպել են երեխին: Ահա սա կոչւում է (հաղա-

*) ՑՏՍ «Մուրճ», № 2.

**) II դիրք. 224 երես. և VI դիրք 315 երես:

դէպ) օրօրոցակոխ. բայց առհասարակ սա նոյն կոխուելն է, ինչ որ վերէն ասացինք: Երբ բորենին (մարդագայլը) ամառնե-
րը համարձակ մտնում է գիւղերն ու օրօրոցից երեխին գողա-
նում տանում է ճարպիկ կերպով, նա կոչւում է օրօրոցագող,
իսկ Գանձակի բարբառով կոչւում է ըրօրացակեօղ: 3) Ծննդե-
կանի գլխի տակը Նարեկ և Աւետարան դնելը սովորական
չեն: Աւետարանը կարդացւում է տունը փարատելիս, իսկ Ա-
ւետարան և Նարեկ ծանր հիւանդութեան, վախի, ընկնաւորած
ժամանակ, ինչպէս և այլ դէպքերում: Բացի դրանից՝ Նարեկն
այնքան հազւագիւտ գիրք է, որ նրա նկարագրած վեց գաւա-
ռում մի քանի հատ հազիւ գտնուի և այն էլ վանքերում և
քաղաքներում, իսկ գիւղերում հաւանօրէն իսկի չլինի:
Ծննդկանի գլխի տակ և տեղաշորի—դռակի տակ դնում են
շամփուր, սուր, դաշոյն, ասեղ, երկաթի կտոր, որոնք հատու
զէնքեր են չարքերի, սատանաների համար: Այսպէս՝ եթէ շամ-
փուրը կամ ասեղն աշողուի սատանի մարմնի մէջ կոխել, շու-
լալել, այնուհետև նա ոչ միայն անշնաս և տեսանելի է դառ-
նում, այլև այդ տան մշտական ծառայ—դուլ: Բացի դրանից՝
երբեմն տղոցկանի տեղաշորի չորս կողմը, իբրև նախազգուշացը-
նող միջոց կոխուելու դէմ, այծի կոշտ մազի պարան (ղաղլ) են
պատ տալիս, որ չարքերը չկարողանան վրայից անցնել տղոց-
կանին:

5. Մահ եւ թաղումն. — Սրանց հետ կապուած սովորու-
թիւններն ու ծէսը բոլոր են միջին հաշուով 6 երես (34: 6=6):
Նախ ասենք, որ այս մասում իմիջի այլոց պակաս են ինքնա-
սպանների, սպանուածների, անճաշակ մեռածների և չմկրտուած
երեխաների թաղման վերաբերեալ սովորութիւններն, ինչպէս և
այն, թէ ի՞նչ են անում, երբ իրանց տան առաջից ննջեցեալ
են անցկացնում: Հիմա անցնենք սովորութիւններին. ա) Լալկան
կանայք.—գիւղերում յատուկ «լալկան» կանայք չկան, որ «հը-
րաւիրուեն» ննջեցեալի տունը և ոչ էլ ննջեցեալի նաշի չորս
բոլորը ողբացողներից մէկը կոչւում է «ողբոց մայր»: Առհա-
սարակ գիւղերում ոչ ոք չի հրաւիրւում ննջեցեալի վրայ ող-
բալու. ամենքը, համարեա ամբողջ դրացիութիւնը ինքնաբե-
րաբար գալիս է մասնակցելու թաղմանը: Դազաղը շրջապա-
տում են միայն ննջեցեալի մօտիկ ազգական կանայք: Բ) Զա-
ւախքի մէջ այդ բաժնում կարդում ենք.—«Իւրաքանչիւր մարդ
եղկնքում կեանքի պոտուով ունի, որի մէջը թեփ է ածած, երբ
թեփը պարպի՝ մարդը կմեռնի»¹⁾. այս բացատրութիւնը տա-

¹⁾ I Գիրք. 308 երես. իդէպ է ասել, որ այդ առթիւ երեսի ոտորեւում

լիս է պ. Լալայեանը՝ «Թեփը պարպել» նախապաշարմանը։ Իսկ մենք կ'ասենք.—Թեփը ավելի մնացորդն է, որ սովորաբար պահում են պուտուկի կամ կճուճի մէջ, դարու ավելի հետ խառնելով՝ տալիս են նոր ծնած կովերին և այնու եթէ մէկի թեփը հատել է, ասել է՝ հատել է և ավելը։ Ալիւր չունեցողը հաց էլ չունի. հաց՝ չունեցողը սովամահ է լինում—մեռնում է։ Ահա այդ թեփը կտրուի, կամ թեփդ պարպի ամենամեծ անէծքներից մէկն է, և եթէ մէկին անիծում են, թէ թեփդ կտրուի, դա նշանակում է՝ ավելը չունենա, տանդ հացը կտրուի, սովամահ լինիս, որից և փոխաբերաբար թեփդ պարպի՝ ասել է «մեռնես», կամ թեփդ պարպել է՝ ասել է «մեռնելու ես»։ Ասել է, պ. Լալայեան առանց հասկանալու «Թեփդ պարպի» անէծքի միտքը, որ մահուան հետ կապուած սովորութիւնների և ճակատագրի հետ ոչ մի առնչութիւն չունի, զիւղական կաւէ ողորմելի թեփի պուտուկը տարել հանել է մինչև երկինք։ Գ) Ճշմարիտ է, ոչ միայն Սիսիանում ¹⁾, այլև ամեն տեղ երեսմանների մահուան դէպքում ասում են, թէ «նրանք Աստծուն մատաղ եղան», և առհասարակ վերցրած՝ երեսմանների մահուանը մի առանձին նշանակութիւն չեն տալիս ու շատ չնչին ցաւ են հաշոււմ, իսկ նորածինների մահն ուղղակի աննկատելի է անցնում, բայց իբր թէ երեսայ «ննջեցեալ չունեցողը չէ կարող յուսալ արքայութիւն գնալու», հաւանօրէն դա մի տգէտ տիրացուի բացատրութիւն է։ Դ) Վարանդայում ²⁾ և Գանձակում ³⁾, ինչպէս և ուրիշ տեղերում գոյութիւն ունի այն նախապաշարումը, որ երբ տան մէջ մէկի մեռնելուց յետոյ հիւանդանում է մի ուրիշը, ասում են թէ մեռելը ուրիշների էլ է տանելու, ու այդ դէպքում ենթադրում են, թէ նա չէ մեռած, և ստուգելու համար իբր թէ բաց են անում գերեզմանը, ննջեցեալի գլուխը ջախջախում կամ մի մեխ խփում գլխին, մէկն էլ սրտին։ Մի քանիսն էլ մեռելի սրտից մի կտոր կտրում և հիւանդին են տալիս, որ ջրով ընդունէ և առողջանայ։ Գ. Լալայեան այստեղ էլ երկու տարբեր բաներ իրար է խառնել. թէ լիւն են անում այն դէպքում, երբ վախենում են, որ նոր հիւանդն էլ կարող է մեռնել, այդ թողնենք, միայն թէ նրանք այդ առթիւ ոչ գերեզման են բաց անում և ոչ էլ ննջեցեալի վրայ անդամահատութիւն կատարում։ Մեզ թւում է, թէ պ-

ծանօթութեան ցուցմամբ նայելիք Տեփը բաժինը՝ Հատաքի մէջ ու ոչինչ կապ չգտանք կեանքի պուտուկի և ընկնաւորելու մէջ։

¹⁾ III Գիրք. 245 երես.

²⁾ և ³⁾ II Գիրք. 184 երես. և VI գիրք 315—16 երես.

Լալայեանին մոլորեցրել են այդ առասպելով: Ամեն տեղ այն նախապաշարումը կայ, որ երբեմն գերեզմաններից ձայն է գալիս: Նախապաշարեալ մարդու համար դա մի սոսկալի բան է, մի գալիք չարիքի, դժբախտութեան նախերգանք, ուստի և հնարներ են որոնում կտրել այդ ձայնը, որ սովորաբար նոր թաղածների գերեզմաններից է գալիս: Ահա, անկախ ներանից, թէ ձայն լսողները ննջեցեալի ազգականներն են թէ ոչ, գիշերը ծածուկ նրանք մի քանի հոգով մօտենում են գերեզմանին, մի քիչ հողը դուրս են տալիս և ապա դէպի սիրտը մի սրածայր երկաթ կամ սուր են կոխում ու դրանով «հանգըստացնում անհանգիստ հոգին»: Երբեմն էլ փայտէ երկար բերով ջաջախում են գլուխը: Անկասկած է, որ այդպիսի գործողութիւններից յետոյ ձայնը դադարում է, որ նշան է, թէ փորձանքն անցել է: Այդ գործողութիւնը կարծեմ՝ լուռում «սրահար» է կոչւում: Նոյն սովորութիւնը կայ և Կովկասեան լեռնականների մէջ (պր. Վ. Միլլեր): Ինչ վերաբերում է ննջեցեալի սրից մի կտոր կտրելուն և հիւանդին ջրով տալուն, որ ընդունէ, դա չափազանց անհեթեթ է և սարքովի: Մի այլ բան կայ, որ չի յիշել պ. Լալայեանը.— երբ մէկը վախեցել է կամ ննջեցեալից և կամ մի այլ առթից, վախեցածին նաև խմել են տալիս մարդմովիայի մի փոքրիկ կտոր՝ լուծած ջրի մէջ, իսկ մուսիս (և ոչ մուսիսն) կամ մարդմովիա ուխտատեղիներում մոմից առաջացած ձանձախարիթը չէ, այլ սև՝ կաւանըման մի բան: Ասում են, որ դա մարդու մարմին է, մուսիս է, եգիպտական մուսիսի պէս. թէ ով է պատրաստում այդ բանը, կամ ստուգապէս դա ինչիցն է, յայտնի չէ. որքան ես գիտեմ, մի ժամանակ մուսիան բերում էին Տաճկաստանից:

Մոռացել է գրի առնել ի միջի այլոց և մի սովորութիւն. — երբ տան նամանաւանդ մի «ազիզ» անդամն է ծանր հիւանդանում, տան մէջ աւելի ծերերն ու պառաւները կամենալով հիւանդին փրկել՝ երեք անգամ շրջում են նրա— հիւանդի շուրջը, պտոյտ են գալիս նրա գլխովը, որից է և գլխովդ պտոյտ գաւ՝ գորովական ասացուածը, որ հաւասար է նրան, թէ «չաբըդ տանեմ», «քո տեղ մեռնեմ»:

6. Հաւատք.— Չկարծեմ թէ հարկ լինի բացատրել, թէ ինչ են հաւատքը (կրօնը), հաւատալիքները, սնոտիապաշտութիւնները, նախապաշարումները, աւանդութիւնները, առասպելը: Հաւատքին կարող են վերաբերել՝ ա) աւանդութիւններից նրանք, որ սրբերի և կրօնական տօների են վերաբերում, և ոչ ամեն աւանդութիւն. բ) սնոտիապաշտութիւնները. գ) հաւատալիքներ, որի մէջ և քանի մի կրօ-

նախնի գոյն ունեցող նախապաշարումներ և որոշ կախարհաւորներ, իսկ առհասարակ նախապաշարումները (իբաց առեալ յիշածներս), առասպելները կային հաւատքի հետ կապ չունին և այդ բաժնում չպիտի դրուէին: Պ. Լալայեանի մօտ աւանդութիւնները սնոտիապաշտութիւնների մէջ են խառնուած, սնոտիապաշտութիւնները նախապաշարումների հետ: Իբր նրմուշ՝ բերենք օրինակներ. ա) Վարանդայի¹⁾ մէջ Հաւատքի բաժնում դրել է ուղտաքարերի, ցիցաքարերի պարզ աւանդութիւնները, որ ոչ մի բան չեն պարունակում իրանց մէջ, թէկուզ իբր հեռաւոր ակնարկ հաւատքի: Բ) Մնոտիապաշտութիւններ են, այն էլ ոչ բոլորը, կրակի, լուսաւորների և մի քանի կենդանիների պաշտաման վերաբերեալ աւանդութիւնները, մնացածները կամ պարզ աւանդութիւններ են և կամ նախապաշարումներ: Այսպէս օրինակ.— ծիծեռնակի պաշտամունք չկայ. նա բոյնը ուղղակի օջաղի գլխին չի շինում, որ դէպքում նա և իր ձագերը կը խեղդուէին ծխից և կրակի տաքութիւնից: Հնարովի է այն բոլորն, ինչ վերաբերում է ծիծեռնակի բնի պատճառով հին տունը շնորոգելուն: Գ) Միջատների, կատունների և արջի մասին գրի առածը աւանդութիւններ են և իրենց մէջ այդ կենդանիների պաշտաման վերաբերեալ ոչինչ չեն պարունակում: Վերցնենք Բորչալուն²⁾. սօսի ծառի պատմութիւնը առասպել է. վարդ ու մանուշակը առասպել—աւանդութիւն. թութուն, սիրի-սիրի՝ աւանդութիւն են. լօշտակ՝ աւանդութիւն առասպել է, որի վերջին մասը Պարտիզակցուց է առել՝ առանց աղբիւրը յիշելու. որով մասինը՝ նախապաշարումն է. ծիծեռնակի, կռունկի, ժռուի, յոպոպի, քոռաբուի, տատրակի, կրիայի, գոմշի, գայլի, արջի, կապկի և իշի մասին պատմածները առասպելներ, աւանդութիւններ և առասպելախառն աւանդութիւններ են ու այդ կենդանիների պաշտաման հետ ոչ մի կապ չունին³⁾: Դ). Ոգիների պաշտամունքը առասպելներ և աւանդութիւններ

¹⁾ Ս Գրք. 192—244 երես.

²⁾ X Գրք. 187—249 երես.

³⁾ Թէ ինչ բաներ է պ. Լալայեան հաւատքի մէջ դրել, ցոյց է տալիս այն օրինակը. «Մի անգամ սատանան մօտեցել է իշին և ականջին առել, թէ նրա էգին դցել է գետը: Էջը վշտանալով՝ սկսել է լաց լինել—զուտ, բայց նրա զուտը այնքան անախորժ տղաւորութիւն է գործել սատանայի վրայ, որ նա զգուած՝ շտապել է յայտնելու, թէ սուտ է առել: Իսկայն էջը կտրել է ձայնը՝ հա, հա, հա անելով, ուստի և մինչ այժմ, երբ էջը սկսում է զուտ, մտաբերում է սատանայի վերջին խօսքը և հա, հա, հա անելով դադարում է զուտալուց: X Գրք. 193 երես:

են, իսկ թէ նրանց հետ ի՞նչ կապ ունին ցաւերից՝ օրինակի համար՝ հարինքը (փորրութիւնը), որ պ. Լալայեանի ասածով հրեշտակ էլ ունի—հարինքի հրեշտակ—որին չի մոռանում կցել մի անհեթեթ պատմութիւն, և կամ ցաւախուրջինը և նրա հետ կապուած նախապաշարումը Լայլն Լայլն՝ դժուար, շատ դժուար է հասկանալ: Ե). Սրբերի բաժնում դրել է Օհան Օձնեցու հետ կապ ունեցող երեք աւանդութիւն, որ ոչինչ չեն պարունակում իրենց մէջ «Հաւատքի» համար բացի այն, որ Օձնեցին սուրբ է եղել: Էլ չեմ ասում, որ այդ աւանդութիւնները մէկով անուանարկում է Օձնեցին ապօրինի տղայ ունենալու համար, որ իբր թէ մի հրաշքով փարատւում է նրա վրայի կասկածը: Դ) Գանձակի բաժնում¹⁾ «Հաւատքի» մէջ խօսելով շնապաշտութեան մասին, պատմում է մի զարմանալի դէպք, որ իբր մի տան մէջ գործ անող մի խումբ կանանցից մէկը (Սոնա) երբ սկսում է գրգռել ընկերուհիներին գործադուլ անել, մինչև այդ հանդիստ նստած շունը լուռ մօտենում է այդ կնոջն ու կծում նրան: Մի այլ օր դարձեալ նոյն կինը, երբ տանտիրինը մեղրի վատ մասից է բանողներին բաժին հանում, փնովում է տանտիրինոջն ընկերուհիների առաջ, դարձեալ «նոյն իմաստուն և բարի կամեցող շունը լուեկայն յարձակում է Սոնայի վրա և կծում նրան»: Այս և այսպիսի շատ անցքեր համոզում են գիւղացիներին, որ շան ներկայութեամբ վատ չխօսեն նրա տիրոջ մասին. և սա շնապաշտութեան հետք է . . . Է) Նոյն բաժնում²⁾ սրբերի շարքում տալիս է «մամ զադա» սրբի մի ստայօդ և հակասական պատմութիւնաւորասպել: Իմամ զադա նշանակում է իմամի տղայ կամ իմամի ցեղից. եթէ իմամ է, հայի սուրբ չի կարող լինել երբէք³⁾: Գ. Լալայեանի ասելով իմամ զադան մի հայ տղայ է եղել մի խանի մօտ մտած ծառայ, որ չպատասխանելով խանի կնոջ հրապուրանքներին, վերջնիս վրէժխնդրութեան զօհ է գնում ու սպանւում: Այդ սպանուած հայի վրայ լոյս է իջնում, որից և «հայերը սկսում են պաշտել նրան»: Թէ ի՞նչպէս է հայի տղան իմամ զադա դառել, և թէ պ. Լալայեանը ինչպէս է թուրքի ուխտատեղին հայի սրբութիւն շինել, դա իր գործն է. միայն կասենք, որ իմամ զադան թուրքի ուխտատեղի է և ոչ

¹⁾ VI գիրք. 342 երես.

²⁾ նոյն. 356 երես.

³⁾ Այս մեր յօդուածը բոլորովին պատրաստ էր, երբ հանդիպեցի Գանձակի Գ. քահանայ Բաբաքեկեանին, որ հաստատեց իմ ենթադրութիւնը, թէ «մամ զադան» հայերի ոչ սրբութիւն և ոչ ուխտատեղի է:

մի կապ չունի առաջ բերուած պատմութեան հետ: Աւանդաբար ասուով է, որ ժամանակով եղել է մի խորովիկ ճղգնաւոր, որ նահատակուել է թուրքերի ձեռքով ու այդ իմամ զադայի գերեզմանը խորովիկ նահատակինն է, որ յետոյ թուրքերը խել են հայերի ձեռքից և զարծրել ուխտատեղի: Ահա այս է հայերի մէջ պատմուած աւանդութիւնը այդ ուխտատեղիի մասին. սակայն սա աւանդութիւն է, որ ստուգել հազիւ թէ կարելի լինի: Ծշմարիտն այն է, որ հայերն այնտեղ ուխտ չեն գնում, իսկ թուրքերն էլ «Գեոզ իմամ» են ասում առաւելապէս և ոչ թէ իմամ զադա: Ը) Նոր տարու, ¹⁾ ապրիլի 1-ի խաբելը նորամուտ սովորութիւններ են, որոնց վերջնիս մասին կարող ենք ասել, որ Գանձակի գիւղերում տարածուած չէ, այլ քաղաքում—Գանձակում: Նաւասարդի և ծաղիկ քաղելու ու վիճակի սովորութիւնները, նամանաւանդ վերջինները հաւատքի հետ մասն չունին: Թ) Վարանդայի հաւատքի բաժնում ²⁾ կայ էջմիածնի տնտեսի առասպելը. թողնելով այն, որ դա հաւատքի հետ և ոչ մի կապ չունի, կ'ասեմ, որ Ղարաբաղում առհասարակ էջմիածինն իբր սրբութիւն անծանօթ է. վերջին տարիներս միայն կամաց-կամաց մուտք է գործել նա Նրանց՝ զարաբաղցոց էջմիածինն են Գանձասարը՝ խաչէնում և Զիւանդիբի գաւառում առհասարակ, Դիզափայտը, Ամարասը, Ղևոնդայ վանքը Վարանդայում, և Տաթևը՝ Զանգեզուրում, Սիսիանում, Ղափանում և այլն: Մեծ և Փոքր Սիւնիքի համար դարերի ընթացքում այդ վանքերն են եղել այն, ինչ որ է էջմիածինը Միջին Հայաստանի համար: էջմիածնի տնտեսի այդ պատմութիւնը մի տափակ սրախօսութիւն է էջմիածնի և նրա կաթողիկոսի հասցէին, որ շարադրել է որևէ զարաբաղցի յամենայն դէպս ոչ այն նպատակով, որ էջմիածնի սրբութիւնը գովաբանի: Ժ) Կախարդութիւն.—Թէ լինէ բանի է կախարդութիւն անունը տալիս պ. Լալայեան, ցոյց են տալիս հետեւեալ օրինակները.—«Եթէ կաշաղակը կանչէ, հիւր կը գայ: Եթէ բուն բուայ մի տան վրայ... մինը կը մեռնի: Եթէ արագիւր վերադառնալիս կտցում մի որևէ որդի կտոր ունենայ բռնած, պատերազմ, կոտորած է լինելու և այլն: Մարդկանցից կոյրը, կաղը, քողը չարագուշակ են համարուած, ինչպէս և քահանան Եթէ քիթը քոր գայ, հիւր է գալու: Եթէ աջ ձեռքը քոր գայ, փող է ստանալու, իսկ եթէ ձախը քոր գայ, ծախսելու է. և այլն և այլն: Առաջ

¹⁾ Հանդէս, VI դ. երես 362—371:

²⁾ Նոյն, II գիրք. 229 երես.

բերած օրինակները, որ պարզ նախապաշարունակներ են, ոչինչ առնչութիւն չունին կախարդութեան հետ:

Ժա) Բորչալուս գոյութիւն ունեցող ճակատագրի համոզումը համարելով մահմէդականներից հայերին անցած մի պարզապետութիւն», հրաժարւում է բարեբախտաբար «պատմել երկարօրէն այն դարձելի սնոտիապաշտութեան մասին, որ վաղակիչ հիւանդութիւնների ժամանակ փոխանակ զգուշանալու... ննջեցեալների դերեզմաններն են բաց անում, ննջեցեալի գլուխը կտրում, դնում ոտների տակ, սրտին մի մեխ ցցում¹⁾...» հայն: Երբ այդ կերպ վարուելուց յետոյ էլ վարակիչ հիւանդութիւնը չի դադարում, այն ժամանակ էլ իբր թէ «դիակը հանում, ամբողջովին վառում ու փոշին քամուն են տալիս»: Թէ այս բոլորի մէջ ոչինչ պաշտամունք չկայ, դա շատ ակնհեր է, որովհետեւ դա նախապաշարունակ է և ոչ սնոտիապաշտութիւն. իսկ թէ պատմած դէպքը—որովհետեւ այդպիսի մի ընդհանուր առկորութեան գոյութիւն ունենալը մենք մերժում ենք,—որի համար անուն է տալիս, որքան ճիշտ է, թողնում ենք մի կողմ, այլ ընդունելով, որ իրօք այդպիսի մի վայրենի դէպք տեղի է ունեցել, միթէ հնարաւոր է օգտուելով այդ դէպքից՝ նրան ընդհանրացնել մի ամբողջ գաւառի համար:

Ղ) Բարբառներ եւ լեզու.— Որեւէ ազգի քաղաքակրթութեան արտայայտիչներից և գործօններից առաջնակարգը լեզուն է, որ համարեա թէ բացակայում է պ, Լալայեանի աշխատութեանց մէջ. և այն, ինչ որ նա տալիս է իբր նմուշներ նկարագրած գաւառների բարբառների, մի սոսկալի աղաւաղումն է նրանց հնչիւնաբանութեան: Այդ դեռ բաւական չէ, նա այնպիսի աղաւաղումներ է անում, որ ճշգրիտը վերահանգնելու համար մեծ աշխատանք է հարկաւոր: Դիմենք օրինակներին.— Բորչալու. ²⁾ «Կծւուկը» դառել է «Կծղուկ». «բլղըր-դանը»՝ բըղըրան. օղորմակութը՝ ըղրմակութ. լեղակածաղիկը՝ լիղակածաղիկ. աւելուկը՝ ղօլոյ (վրացերէն). ցոթնին. ցառատնի. քծմնծուկը՝ քոմնծուկ. դաղձը՝ պիտնա. գիլակուաւը՝ գելակուաւ. Ժեռը՝ Ժիռ. կրիան՝ կուրիան. տորոնը՝ տորոշ. քոռաբուն՝ քոռաթու կամ քոռաբով. ևայլն: Գանձակ ³⁾. Տուպը՝ պուտ. եղինձը՝ եղիձ. շրմշուղը՝ բաղեղ. ծնեփակը՝ ծնեբէկ. լէնատերեւը՝ լինատրեւ. գիլրմաստին՝ կիլիմաստի. նռնին՝ նռնենի. փը-

¹⁾ X դերք. 153 երես.

²⁾ VII—VIII դերքեր. այս բառերը կրկնակի ստուգել ենք տիրուհի Պոնա Թումանեանից, Դսեղից, որ բանաստեղծ Յովհաննէս Թումանեանի մայրն է:

³⁾ VI դերք. 291 երես.

առջինն՝ ֆոնին. կծոխրին՝ կծոխուր, որ պտղի անուան է. ցը-
ռը՝ տնին՝ ցըրտընի. պեխին՝ բոխի. յափրուկը՝ որ գրական է և
ոչ գաւառական բառ, յապուկ, որ սխալ է ասուած. առւոյտը՝
(եօնջան) սիրիսիրի, որ եօնջան չէ և նրա նման ցողուն չունի.
սիրիսիրին երեք տերեւանի բարակ ցողուն ունեցող խոտա-
բոյս է. բիեանը՝ հասարակ պատուտակ. ծծիլը՝ ծիծեռնը.
ծծիլը ճկոյթ մատն է ըստ այդ բառբառի. գիւլը՝ գիւ-
գիւլը՝ գայլն է. կայլն կայլն, էլ չեմ ասուած, որ շաա բոյսերի
անուաներ, փոխանակ գաւառաբարբառով դնելու, առաջ է բե-
րել գրական ձևով.—մատուտակ, տատասկափուշ, թանթրուե-
նի կայլն.—Վարանդա. թօրն ըս քիսը՝ թօրն ըք քիս. գընըլակու-
նը՝ գննական. հաքուն՝ հաքուր. մկրկանչը՝ մկրկոչէք. ապան՝
բարա. թըրըխարաւը՝ թընըխարաւ. մարը՝ սիրուն. կայլն կայլն:
Առաջ բերածս բառերը վրիպակներ չեն, ու խօսքս էլ վրիպակ-
ների մասին չէ: Այս դեռ բաւական չէ, թէ նա որքան կարող
է որեւէ բարբառ ճանաչել և գրաւոր կերպով արտայայտել
տուած որեւէ բարբառի հնչիւնաբանութիւնը, ցոյց են տալիս
բազմաթիւ օրինակներից հետեւեալները.—Վարանդա. «Ձեր
վոննը գալուքը բարի ինի». «Ուրախ բարեկամ ընիք». «դէ՛հ մը-
տալ էնը էս օճախէն մի հափուռ վէղ եօր օնինք»... «աղէր
(աղէր չէ այլ ա դէր) կարգի պատարագի ըլիս... գիտիւմ ըմ
որ... գինի շատ օնէ». «դէ, դու ըս գիւտիւմ, հինչ օղըմ ըս, տօ
ըլի». «հրամանքդ Աստծու, խնամին տվաւ իւրան ըղջկանը մին
սիրուն կապերտ». «բերում ըս բեր». «էնքան կըննական ըս, որ
լոխչիս գըլխներն օտիս, ետաւ գեօրբագեօտ ընիս»: «Քա մօր
մաղարը կտրէ»... «ախչի թորն ըք քիս». «մունք եկալ ընք մուն
հափուր». «որդասէն (հորթերի) խաչ». «Աստծոյ ցնծուղն տը-
ւած ըրիգնակ, այ մօրա նոր ըլած լուսնիկայ, իմ երեսս քո
ոտանդ տակը»... «թընըխարաւ». «Քու շօքը ոչ պըկասի»
կայլն.—Միսեան³⁾. «Նրբ գանք, ձեր բարի օճաղէն մին ճրագ
կպցնինք». «Աստուած տայ տղաքեր սնամէր ինեմ, ոտակալու-
քը խէր ընի». «Տուայ քու որդուդ»... կայլն.—Ձանգեղուր
«Աստուած էն օճախէն, էս օջախին խէր տայ». «չէն կենայ
քու տղին ա փոխ ընի, հուր ունի Աստուած պինդ ձեռօք.
հուր օնի ոչ, Աստուած տայ». «ծծագին կամ ճնապայ կամ
ճընհապահ» որ պ. Լալայեանի բացատրութեամբ իբր թէ ճա-
նապարհ ասել է, իսկ թէ ծծագին ու ճնապարհ ինչպէ՞ս կա-

¹⁾ II գիրք 170—240 երես.

²⁾ Անդ. 113—244 երես.

³⁾ III գիրք. 5 երես. 4.

բող են մի նշանակութիւն ունենալ, չի բացատրում: Մեզ թը-
ւում է, թէ պ. Լալայեան այդ բառն այնպէս է խեղաթիւրել,
որ անհնար է հասկանալ, ու մեր բոլոր հարց ու փորձերն ա-
պարդիւն են անցել վերականգնելու ճիշտը—խական բառը:
—Գանձակ. «Գու փայլ էս է, առ քընա» կայլն կայլն: Այս բո-
լորի մէջ բացի հնչիւնական կոպիտ սխալներէց, բացի աղաւա-
ղութեան, անհասկանալի բառերէց, կան նաև այնպիսի սխալներ,
որ երբեք տեղի չպիտի ունենային, եթէ պ. Լալայեան ա-
ւելի մեծ ուշադրութեան առնէր իր գրի առածը: Մեր
ընդգծած օրինակները ցոյց կը տան, որ միևնոյն բարբառի մէջ
մի տեղ՝ ընի է, մի տեղ՝ ինի, երբորդ տեղ՝ ըլի. նաև՝ քո, քու,
քա. կայլն: *)

Ա. Վ. Ղ.

(Վերջը յաջորդ համարում)

ՆՈՐ ՄՏԱՑՈՒԱԾ ԳՐԻՔԵՐ

- 1) Խ. Խաչատրեան՝ «Ճապոնիա», Թիֆլիզ, 1904, գ. 3 կ.:
- 2) Վահան Տիրացեան՝ «Որոմն ցանողներ», Թիֆլիզ, 1904,
գ. 30 կ.:
- 3) Վ. Ե. Կոզլով «Բարը երգում է», Թարգմ. Յ. Դուրբախ.-ի,
Ա.-Պետերբուրգ, 1904, գ. 10 կ.:
- 4) Ա. Ահարոնեան՝ «Իտալիայում», Թիֆլիզ, 1904, գ. 1 ր. 50 կ.:
- 5) Լ. Ֆուլդա՝ «Հերոստրատ», Թարգմ. Լ. Ս. Վ., Թիֆլիզ,
1904, գ. 50 կ.:
- 6) Պ. Մանտենզացցա՝ «Միրոյ մեղքերը», Թարգմ. Երուանդ
բահ. Նալբանդեան, Ալեքսանդրօպոլ, 1903, գ. 10 կ.:
- 7) Բժ. Ա. Բուդուղեան՝ «Գործարան թէ երկրագործութիւն»,
Պետերբուրգ, 1904, գ. 15 կ.:
- 8) «Շքեղ», գեղարուեստական ալբոմ, գ. պրակ, հրատարակ.
Գնունի-Մարիմ, Թիֆլիզ, գ. 1 ր. 50 կ.:
- 9) Дрѣ А. И. Хатисовъ: «Вопросы общественнаго здравоо-
храненія на выставкѣ германскихъ городовъ въ Дрезде-
нѣ», Тифлисъ, 1904. ц. ?
- 10) Компере: «Ж. Ж. Руссо и воспитаніе естественное», пер.
П. Д. Первовъ, Москва, 1903, ц. 40 к.
- 11) А. С. Дагбашянъ: «Полный русско-армянскій словарь»,
пятый выпускъ, Тифлисъ, 1904, ц. 1 р.

*) Խմբագրութիւն յօդուածի փաստական ճշտութեան ամբողջ պա-
տասխանատուութիւնը թողնում է յօդուածագրի վրայ: Խմբ.